

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ԻՆՉՈ՞Ւ ԸՆՏՐԵԼ ՄԵՁ

### **Մենք ունենք պատմություն, գիտելիքներ և փորձ**

Իբրև ազգային պահպանողական կուսակցություն՝ ՀՀԿ-ն Հայաստանի պետական կյանքի ամենամեծ փորձառություն ունեցող քաղաքական կառույցն է, հետևաբար՝ ունի ասելիք և անելիք մեր ազգային-պետական կյանքում:

Հանրապետականի քաղաքական արմատները (որոնք գնում են մինչև 1960-ականներ), նրա առաջնորդների հեղինակությունը, իր գաղափարախոսության պատմականությունը (Գարեգին Նժդեհի ուսմունքը) և, միաժամանակ, արդիականությունը (պահպանողականություն) բարոյաքաղաքական զգալի կապիտալ են ապահովում կուսակցության համար:

### **Մենք գիտենք և ընդունել ենք մեր սխալները**

Իհարկե, եղել են բացթողումներ, թերություններ և սխալներ: Բայց նաև մեր գործունեությունը հանիրավի սևացրել են: Չի սխալվում միայն նա, ով չի գործում: Ինչպես ժողովուրդն է ասում, չի մրոտվում միայն շարժիչի այն մասը, որը չի աշխատում: Քաղաքականության մեջ սխալների գինն իշխանության կորուստն է: Մենք վճարել ենք այդ գինը: Բայց դա չպետք է նշանակի մեր գիտելիքների ու փորձի օգտագործման հնարավորության կորուստ Հայաստանի քաղաքացու համար:

## **Պատրաստ ենք ծառայելու Հայրենիքին**

Մենք ունենք բազմաթիվ հայրենասեր, փորձառու, խելացի թիմակիցներ, ովքեր, անկախ որևէ հանգամանքից, պատրաստ են ամեն ջանք ներդնել հանուն Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի: Օգտագործենք նրանց փորձն ու գիտելիքը երկրի հետագա զարգացման համար:

### **ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

- Մենք ազգային պահպանողական կուսակցություն ենք, որի նպատակներն ու գործունեությունը բխում են Ազգի և Հայրենիքի հավիտենականության գաղափարներից:
- Հայոց պետությունը հայության նպատակների իրականացման հիմնական և ամենաարդյունավետ միջոցն է: Պետության հզորացումն է այն միակ երաշխիքը, որն ապահովելու է մեր ժողովրդի զարգացումն ու հարատևությունը, քաղաքացիների բարեկեցությունը, մեր սահմանների պաշտպանությունը, մեր տեղն ու դերը միջազգային ասպարեզում:
- Բարձր գնահատելով Հայ Առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, հայոց լեզվի ու մշակույթի, դրանով իսկ՝ հայության միասնության պահպանման գործում, մենք այն համարում ենք հայ ինքնության անբաժան մաս, որն իր դավանաբանությամբ և նվիրապետությամբ կոչված է ծառայելու Աստծուն և Ազգին:
- Հայ հասարակության հիմքը ավանդական ընտանիքն է: Ամուր և առողջ ընտանիքների ձևավորումը, ընտանիքում

ազգային-ավանդական արժեքների պահպանումն ու զարգացումը պետք է լինեն պետության կարևորագույն խնդիրներից:

- Պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի սփյուռքահայության ներուժի համախմբման համար՝ ի նպաստ Հայոց պետության հզորացման, սփյուռքի արժանապատիվ գոյատևման, հիմնական նպատակ համարելով սփյուռքահայության վերադարձը Հայրենիք:
- Բազմակարծության, քաղաքական ազատությունների, իրավունքի գերակայության, մրցակցային հավասար պայմանների, մտքի, խոսքի, խղճի ազատության լիարժեք կենսագործումն այլընտրանք չունի:
- Հայաստանի ցանկացած քաղաքացու ձայնը պետք է լսելի լինի, քննադատությունը՝ ուշադրության ու հարգանքի արժանի:

## **ՄԵՆՔ «ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՂՆ ԵՆՔ**

**«Ազգ-բանակ» հայեցակարգը պետության  
պաշտպանունակության, կայուն ու անվտանգ  
զարգացման երաշխիքն է**

Որպես անվտանգության և պաշտպանության ապահովման ոլորտում տասնամյակների քաղաքական ու կառավարչական փորձ ունեցող ուժ՝ մենք շարունակելու ենք մեր հանձնառությունը մեր երկրի Ձինված ուժերի արդիականացման, նրա նկատմամբ քաղաքացիական և խորհրդարանական վերահսկողության արդյունավետ գործիքների ներդրման, բանակի նկատմամբ

հանրային վստահության պահպանման ու նպատակային ջանքերի գործադրման ուղղությամբ՝ հանուն մեր ժողովրդի և երկրի կայուն ու անվտանգ զարգացման:

Ստացվել է այնպես, որ մեր պետության մեջ յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր քաղաքացի ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում է զինվորական ծառայության խնդիրներին: Բայց 21-րդ դարում դա բավարար չէ, քանի որ այս դարը որակի, գաղափարի, արդյունավետության ավելացման դար է: Ներկայում երկրի պաշտպանունակությունը, առկա մարտահրավերներին դիմակայելը կախված են անվտանգության համակարգում յուրաքանչյուր քաղաքացու կողմից իր տեղի և դերի հստակ իմացությունից, նրա պատրաստվածության աստիճանից և պետության կազմակերպչական կարողություններից:

Անհրաժեշտ է՝

- Սպառազինության արդիականացման և համալրման 7-ամյա ծրագրի անշեղ կատարում
- Ռազմական կրթության որակի կտրուկ բարձրացում
- Գիտատար ռազմարդյունաբերական համալիրի զարգացում
- Արդյունավետ ռազմադիվանագիտական և ռազմատեխնիկական փոխգործակցության ընդլայնում
- Սպայական ծառայության սոցիալական երաշխիքների ուժեղացում

- Ժամկետային զինծառայության որակի բարձրացում, քաղաքացու ապագա սոցիալական կարգավիճակի հետ փոխշաղկապում
- Պահեստագործի հետևողական ամրապնդում
- Զինհաշմանդամների ինտեգրման համակարգի ներդրում
- Զոհված զինծառայողների ընտանիքներին բարոյական, հոգեբանական և նյութական աջակցության ընդլայնում:

## ԱՐՅԱԽ

Կան հարցեր, որոնցում լինելու ենք անզիջում: Դրանցից առաջինն ու ամենագլխավորն Արցախն է: Արցախը միայն արցախցու ինքնորոշման իրավունքի խնդիրը չէ: Այն մեր ողջ երկրի անվտանգության հարցերի հարցն է:

Միայն ուժեղ բանակով, անվտանգության հզոր համակարգով, խոհեմ արտաքին քաղաքականությամբ, «Ազգ-բանակ» դառնալով ենք ի վիճակի լինելու առերեսվել այդ վտանգներին:

Զի՛ կարող լինել լուծում առանց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման բոլորի կողմից: Զի՛ կարող լինել միակողմանի զիջում:

Հայ ժողովրդի բնականոն զարգացման համար խաղաղությունը կենսական անհրաժեշտություն է: Բայց մենք կտրականապես դեմ ենք «Խաղաղության դիմաց՝ տարածքներ» թեզին, որովհետև այս գաղափարի ամրապնդումն ու հատկապես իրականացումը էլ ավելի հավանական կդարձնեն լայնամասշտաբ պատերազմի վտանգը:

Մեր ջանքերն ուղղվելու են միջազգային կազմակերպություններում խնդրի ուժային լուծումը բացառող և կանխարգելող որոշումների ընդունմանը:

Արցախի սոցիալ-տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպերի պահպանումը շարունակելու է մնալ կարևորագույն առաջնահերթություն:

Մենք հայցում ենք Ձեր քվեն՝ Արցախի անվտանգ ապագան և կայուն զարգացումն ունենալով որպես մեր օրակարգի թիվ մեկ խնդիր:

## **ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ**

Այս օրերին հաճախ են ասում՝ ինչո՞ւ եք անհանգիստ, չէ՞ որ նոր իշխանությունները շարունակում են ձեր արտաքին քաղաքականությունը: Հատկանշական է՝ մեր ընդդիմախոսներն ընդունեցին, որ այդ քաղաքականությունը խոհեմ էր և Հայաստանի համար միակ ճիշտը, իսկ նրանց մոտեցումները, մասնավորապես՝ ՀԱՊԿ-ից և ԵԱՏՄ-ից դուրս գալու պահանջները՝ անպատասխանատու արկածախնդրություն:

Ռազմավարական դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ, շրջանակային համաձայնագիր ԵՄ-ի հետ, ընդլայնվող գործընկերություն ԱՄՆ-ի հետ, բարիդրացիական փոխգործակցություն Իրանի և Վրաստանի հետ, խորացող երկխոսություն Չինաստանի հետ, նշանակալի դերակատարում ՀԱՊԿ-ում և ԵԱՏՄ-ում, նաև՝ նախագահություն Ֆրանկոֆոնիայի կազմակերպությունում:

Հաջողության բանաձևն է՝ գիտելիք, հմուտ թիմ, խոհեմություն, հետևողական աշխատանք:

Միայն հայտարարություններով այդ ամենը պահել հնարավոր չէ: Իրական նպատակներն ու տեսլականը դրսևորվում են գործերով, կայացրած որոշումներով: Անցած ամիսները խոր անհանգստություն են առաջացնում մեր երկրի արտաքին կապերի զարգացման հեռանկարի տեսանկյունից: Մենք այնպիսի տարածաշրջանում և ժամանակահատվածում ենք ապրում, որ յուրաքանչյուր սխալ կարող է ճակատագրական դառնալ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆՔ ԱՇԽԱՏԵԼ հավասարակշռված և վարելու ենք Հայաստանի երկարաժամկետ շահերից բխող արտաքին քաղաքականություն:

## **ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Տնտեսական աճը պետք է լինի ներառական՝ յուրաքանչյուր անհատի ընձեռնելով աշխատանքի ու գործարարության ինքնադրսևորման հնարավորություն: Բոլոր տեսակի մենաշնորհներից ազատությունն այդ հնարավորությունների ստեղծման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է:

Հնարավորությունների լիարժեք իրացումը կարող է տեղի ունենալ միայն անհրաժեշտ ենթակառուցվածքներ և ինստիտուտներ ստեղծող հետևողական և նվիրված աշխատանքի շնորհիվ: Դրանց ձևավորումը շարունակական գործընթաց է և պահանջում է տնտեսական քաղաքականության հստակ



առաջնահերթությունների որոշում, դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսների ապահովում:

Մրցունակ տնտեսության հասնելու համար մեր առաջնային գերակայությունները եղել և մնում են արտահանման խթանումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ աշխատանքի արդյունավետության բարձրացումը, փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսումը: Նախորդ տարիների աշխատանքի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ունի մեծ և իր արտադրողի համար տեխնոլոգիապես համարժեք շուկաների հասանելիություն, կայուն և բարելավվող էներգետիկ համակարգ, ինտենսիվ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար շոշափելի նախադրյալներ:

Այս հնարավորությունները ստեղծվել են տնտեսական քաղաքականությունից բխող էական ինտեգրացիոն և ենթակառուցվածքային ծրագրերի հետևողական իրացմամբ, և մենք ամեն ինչ անելու ենք, որ հետևենք ներառական գործարարության և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման խթանմանն ուղղված մեր քաղաքականությանը:

## ՄԱՐԴԸ

Հայոց պետության գլխավոր հարստությունն ազգի և պետության հանդեպ պատասխանատվության գիտակցում

## ունեցող մարդն է՝ իր ֆիզիկական, մտավոր և բարոյական ներուժով

- Մարդը տնտեսական աճի թե՛ առաջնային նպատակն է, թե՛ կարևորագույն բաղադրիչը: Պետական ապարատի և բիզնեսի օպտիմալացումը պետք է զուգակցվի մարդկանց համար նոր հնարավորությունների ստեղծմամբ, այլ ոչ թե գոյամարտում ամենակենսունակի գոյատևման հավատամքով:
- Կրթության համակարգը մեր կարևորագույն մարտահրավերն է: Այն պահանջում է էական բարեփոխումներ, յուրաքանչյուր ուսանողի և աշակերտի լիարժեք ներգրավում ուսման բոլոր գործընթացներում: Հայաստանի Հանրապետությունում այժմ առաջնային է մարդկային կապիտալի զարգացումը, որ ենթադրում է ծախսային և ներդրումային առաջնահերթությունների որոշակի վերանայում:
- Մարդկային կապիտալի բարելավման առաջնահերթություններից է նաև առողջապահության ոլորտը: Համակարգում ծախսերի օպտիմալացմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է օր առաջ քննարկել պարտադիր ապահովագրման հայեցակարգը: Այն հնարավորություն կտա պետական ծառայողներին ընձեռված հնարավորության նմանությամբ՝ հանրապետության բոլոր

բնակիչների համար հասանելի դարձնել ծառայությունների մեծ փաթեթ:

- Սոցիալական ապահովության համակարգը պետք է ապահովի արժանապատիվ ծերություն և հարափոփոխ աշխարհում աշխատուժի անընդհատ վերապատրաստման, բարելավման նոր հնարավորությունների ընձեռում: Եթե իրացված կենսաթոշակային բարեփոխումները երկարաժամկետ հատվածում հնարավոր են դարձնում առաջին նպատակի իրագործումը, ապա երկրորդի համար անհրաժեշտ են կրթության, տնտեսության և սոցիալական ոլորտների մասնագետների համատեղ ջանքերը: